

Տնօրենի խոսքը

Մեր տասնամյա գործունեությունն ու փորձը թելադրում են մեր հետագա աշխատանքներն ավելի լայնորեն հանրությանն ու ՄԶՄԿ գործընկերներին ներկայացնելու և լուսաբանելու անհրաժեշտությունը: Այդ նպատակով նախաձեռնեցինք ՄԶՄԿ պարբերական լրատուի թողարկումը, որը կամփոփի մեր եռամսյա գործունեությունը: Դրա արդյունքում հուսով եմք, որ ավելի սերտ կապ կհաստատվի նրանց հետ, ովքեր հետևում են ՄԶՄԿ գործունեությանն ու համագործակցում են մեզ հետ:

Ուրախությամբ ուզում եմ նշել, որ մեր տասնամյա գործունեության արդյունքում Հայաստանում ձևավորել ենք համաշխարհային լավագույն չափանիշներին համապատասխանող արդի վերլուծական կենտրոն: Անաժիս վկայությունը վերջերս միջազգային հեղինակավոր կառույցների կողմից տրված գնահատականն է, ըստ որի՝ հայկական ՄԶՄԿ-ն ճանաչվեց Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի լավագույն 25 վերլուծական կենտրոններից մեկը: Այս գնահատականը պարտավորեցնում է: ՄԶՄԿ-ն ավելին քան երբևէ հստակ պատկերացնում է իր անելիքները, որոնք հիմնականում ուղղված են բաղաձայնական հասարակության և պետության միջև կապի ամրապնդմանը:

Հուսով եմ, որ տեղեկատվական առումով լրատուն կլինի բովանդակալից և հետաքրքիր ընթերցողների համար:

Թևան Պողոսյան

ՄԶՄԿ գործադիր տնօրեն

Ծրագրերի ընտրանի

Խաղաղաշինություն սևծովյան տարածաշրջանում. մի՞ֆ թե իրականություն

Հայաստանի բաղաձայնական հասարակության ավելի քան 50 հեղինակավոր կառույցներ ներգրավված են Սևծովյան տարածաշրջանի խաղաղաշինական ցանցում: 2010թ. ՄԶՄԿ-ն ցանցի շրջանակներում իրականացրել է երկու աշխատանքային հանդիպումներ, որոնց ընթացքում քննարկվել են աշխատանքային տարվա անելիքները, ցանցի գործունեության հիմնական ուղղությունները, սկզբունքներն ու տեխնիկական խնդիրները:

Սևծովյան տարածաշրջանի խաղաղաշինական ցանցը տարածաշրջանային նախաձեռնություն է, որի գործունեությունն ուղղված է ծրագրում ընդգրկված երկրների բաղաձայնական հասարակությունների ներկայացուցիչների ջանքերով նպաստել տարածաշրջանում խաղաղության ամրապնդմանը: Ցանցը ներառում է Հայաստանի, Ադրբեջանի, Ուկրաինայի, Մոլդովայի, Վրաստանի, Թուրքիայի և Ռուսաստանի բաղաձայնական հասարակության հեղինակավոր կառույցների ներկայացուցիչների և խաղաղության ամրապնդման ջատագովների: Այն ձգտում է խաղաղության ամրապնդման ուղղությամբ տարածաշրջանային համագործակցությունը ամրապնդել հասարակական կազմակերպությունների հատվածում: Սևծովյան տարածաշրջանում կայուն խաղաղության ամուր հիմքեր հաստատելու նպատակով այս մակարդակում վերոհիշյալ յոթ երկրներում ցանցը աշխատում է խաղաղաշինության բնագավառում առավել արդյունավետ կարողություններ զարգացնելու ուղղությամբ:

Ցանցի շրջանակներում ՄԶՄԿ 2009թ. կազմակերպել է չորս

Լրատուն

ՄԶՄԿ Լրատուն հրապարակվում է 2010թ. ապրիլից: Լրատուն նպատակ ունի բարելավելու մեր հաղորդակցությունը Հայաստանում և տարածաշրջանում բաղաձայնական հասարակության, պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների, ինչպես նաև զարգացման աջակցող կառույցների՝ մեր գործընկերների հետ: Հուսով եմք, որ Լրատուն օգտակար կլինի Ձեզ համար, հնարավորություն կընձեռնի տեղեկանալ մեր ընթացիկ աշխատանքին, կներկայացնի մեզ ու մեր գործունեությունը:

հանդիպումներ՝ հրավիրելով մի շարք գեկուցողների և խորհրդակցելով բազմաթիվ փորձագետների հետ: Շուրջ 80 փորձագետ է մասնակցել ՄԶՄԿ կազմակերպած քննարկումներին, ովքեր իրենց գաղափարներով նպաստել են ՄԶՄԿ կողմից հայերեն և անգլերեն լեզուներով գրված չորս համառոտագրերի պատրաստմանը:

«Տղամարդիկ պիտի լինեն կանանց առաջընթացը խոչընդոտող գենդերային անհավասարության պատճենները վերացնելու առաջամարտիկները»

Գենդերային բռնության երևույթի յուրահատկությունը կայանում է նրանում, որ գոյություն ունի աշխարհի բոլոր երկրներում և բացահատում է հասարակության մեջ կնոջ ստորադաս կարգավիճակը: Սովորաբար գենդերային բռնության զոհերը չեն բարձրաձայնում այն մասին, որ իրենց նկատմամբ բռնություն է գործադրվել, քանզի նրանք վախենում են ամուսիններից, չեն վստահում իրենց օգնության ձեռք մեկնողներին և մշտապես հոգեբանական ճնշումների մեջ են: Այս գործոնները դժվարացնում են զոհերի հետ համագործակցելու և անհրաժեշտ օգնություն ցուցաբերելու փորձերը:



Ոստիկանները ներկայացնում են գենդերային բռնության կանխարգելման գործնական փորձը

Հայ հասարակության կողմից գենդերային բռնության ընկալումը և հասարակության մեջ ձևավորված կարծրատիպերը չափազանց անհանգստացնող են: Հայաստանի կանանց ավելի քան 22%-ը համաձայն են այն գաղափարի հետ, որ որոշ դեպքերում կարելի է արդարացնել ամուսնու կողմից կնոջ վրա ձեռք բարձրացնել (ժողովրդագրական և առողջապահական հարցում /DHS Armenia,

2005): Բարձրագույն կրթություն ստացած կանայք և տղամարդիկ ավելի քիչ են հակված արդարացնելու գենդերային բռնությունը, քան կրթություն չունեցողները:

Հայաստանում ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամի կողմից ֆինանսավորվող «Պայքար Հայաստանում գենդերային բռնության դեմ» ծրագիրը, որն իրականացվում է ՄՇՄԿ-ի, Համալսարանական կրթությանը կանանց ասոցիացիայի, «Տաթև 95» հոգեբանական օգնության և խորհրդատվության կենտրոնի համատեղ ջանքերով, ուղղված է Հայաստանում գենդերային բռնության դեմ պայքարին, նպատակ ունի այս խնդրի վերաբերյալ բարձրացնել հանրային իրազեկվածությունը, ինչպես նաև զարգացնել պոտենցիալ գոհերի հմտությունները բռնության դեմ պայքարելու հարցում:

ՄՇՄԿ-ն, համագործակցելով տեղական երեք կազմակերպությունների հետ, գոհերին աջակցություն ցուցաբերելու նպատակով կազմակերպեց դասընթացներ՝ դրանցում ներգրավելով ընտանեկան բռնության ենթարկվող ու մշտական հոգեբանական ցնցումների մեջ գտնվող շուրջ 250 կանանց և աղջիկների: Շահառուներին հավաքագրելիս գործընկերների կողմից որպես թիրախ ընտրվել էին մանկատներում, հոգածության կենտրոններում, սոցիալապես անապահով խավի համար նախատեսված կացարաններում բնակվող, ինչպես նաև վիրաբուժական, նյարդաբանական, վնասվածքաբանական և գինեկոլոգիական կլինիկաների հիվանդների ռիսկային խմբերը:

Հատուկ ուշադրություն էր դարձվել գոհերի մոտ վստահության վերականգնման խնդրին: Գենդերային բռնության գոհերին տեղեկացվել է, որ ոչ միայն մշտական հնարավորություն ունեն ստանալու հոգեբանական խորհրդատվություն, այլ նաև նրանց այդ ծառայությունը տրամադրվել է անվճար:

Կանանց և աղջիկների համար կազմակերպվել են ինքնապաշտպանության դասընթացներ: Գենդերային բռնության 57 գոհեր (բոլորը կանայք), ստացել են անվճար մասնագիտական խորհրդատվություն և հոգեբանական օժանդակություն: Ծրագրի գործընկերների ֆինանսական աջակցությամբ նրանց տրամադրվել է ամբողջական օժանդակություն, այդ թվում՝ ֆինանսական օգնություն, բժշկական և իրավաբանական խորհրդատվություն, մասնագիտական վերապատրաստման, երեխաների խնամքի և այլ անվճար ծառայություններ:

Դասընթացները հնարավորություն են տվել կանանց և աղջիկներին ստանալ սոցիալական և հոգեբանական խորհրդատվություն, ձեռք բերել համապատասխան աշխատանք, ընդգրկվել սոցիալական ապահովության ծրագրերում, ինչպես նաև վերականգնել ինքնավստահությունն ու լիարժեքորեն վերախնդրվել հասարակության մեջ:

2010թ. ծրագրի շրջանակներում ՄՇՄԿ-ն իր գործընկերների հետ կազմակերպել է գենդերային բռնության թեմայով դասընթացներ, որը գենդերային բռնության խնդիրների մասին իրազեկել է առողջապահության ոլորտի ավելի քան 60 մասնագետների, 60 ոստիկանների, 50 քաղաքապետների, հասարակական կազմակերպությունների 20 ներկայացուցիչների:

Նոր մեխանիզմ հին խնդրի լուծման համար

Հայաստանում գենդերային բռնությունների կանխարգելումը քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների և քաղաքականություն կերտողների հետևողական աշխատանքի կարիքն ունի: Այս ուղղությամբ իրականացված գործողությունները նպատակ ունեն նվազեցնել երկրում գենդերային բռնությունները և բարձրացնել հանրային իրազեկվածությունը գենդերային բռնության և դրա վերացման ուղիների վերաբերյալ:

Գենդերային բռնության կանխարգելմանն ուղղված միջոցառումների իրականացման արդյունավետության բարձրացման, տեղեկատվության հավաքագրման և փոխանակման մեխանիզմների մշակման, ինչպես նաև «Ընդդեմ գենդերային բռնության» ազգային ծրագրի մշակման նպատակով վարչապետի 2010թ. մարտի 30-ի որոշմամբ ստեղծվել է Գենդերային բռնության դեմ պայքարի միջգերատեսչական հանձնաժողով, որի անհատական կազմում նե-

րառվել է նաև ՄՇՄԿ ներկայացուցիչը:

ՄՇՄԿ-ն այս բնագավառում բավականին հարուստ փորձ ունի: 2008թ. սեպտեմբերից ի վեր Կենտրոնը կազմավորել և առաջնորդում է քաղաքացիական հասարակության կազմակերպությունների կոնսորցիումը, որը նպատակ է հետապնդում ձևավորել Հայաստանում գենդերային բռնության նվազմանը և այս ոլորտում երկրի ստանձնած պարտավորությունների իրականացմանը նպաստող միջավայր:

Միգրացիոն խնդիրների արդյունավետ կառավարումը հնարավորություն կտա Հայաստան-ԵՄ համագործակցությունը բարձրացնել որակապես նոր մակարդակի

Հայաստան-ԵՄ համագործակցության կարևորագույն ուղղություններից է դարձել Հայաստանում միգրացիայի կառավարման համակարգի բարելավումը: Այս ոլորտում վերջին տարիներին իրականացվել և իրականացվում են մի շարք խոշոր և կարևոր ծրագրեր:

2007-2009 թվականներին նման ծրագրերի շարքում կենտրոնական դեր խաղաց Եվրոպական միության օժանդակությամբ, Մարդկային զարգացման միջազգային կենտրոնի, ՀՀ տարածքային կառավարման նախարարության Միգրացիոն գործակալության (ներկայումս Միգրացիայի պետական ծառայություն) և Բրիթիշ Զառնսիի կողմից իրականացված «Աջակցություն Հայաստանում միգրացիոն քաղաքականության մշակմանն ու համապատասխան կարողությունների ձևավորմանը» ծրագիրը, որի հիմնական արդյունքները, ձեռքբերումները և քաղված դասերը ամփոփվեցին 2010թ. փետրվարի 19-ին «Անի Պլազա» հյուրանոցի «Անի» սրահում տեղի ունեցած ծրագրի եզրափակիչ խորհրդաժողովում:



Միգրացիայի ծրագրի ամփոփիչ համաժողովում. 2010թ. փետրվար, Երևան:

ՄՇՄԿ գործադիր տնօրեն Թևան Պողոսյանը խորհրդաժողովի իր բացման ելույթում նշեց, որ. «Միգրացիայի ոլորտում շահագրգիռ պետական մարմինների և ոչ պետական կառույցների միջև սերտ համագործակցության շնորհիվ, ծրագիրն ունեցել է մի շարք կարևոր և կայուն ձեռքբերումներ: Մասնավորապես, ծրագրի շրջանակներում ստեղծվել է միգրանտների աջակցության կենտրոնը, որը գործում է առայսօր, արդեն՝ պետական ֆինանսավորմամբ և իր ծառայություններն է մատուցել շուրջ 1700 միգրանտների: Ծրագրի շրջանակներում ստացվել և ներկայումս գործում է www.backtoarmenia.com պաշտոնական կայքը, որը խիստ արդյունավետ հաղորդակցության ուղի է արտերկրում գտնվող մեր համաքաղաքացիների և ՀՀ պետական մարմինների միջև: Մշակվել են մի շարք օրենսդրական ակտերի նախագծեր, ինչպես նաև ՀՀ միգրացիայի պետական կարգավորման հայեցակարգի 2010-2014թթ. ռազմավարության նախագիծը, որը պաշտոնական շրջանառության մեջ

Ե դրել ՀՀ Ազգային անվտանգության խորհրդին կից միգրացիոն հարցերով աշխատանքային խումբը»:

Համաժողովի ընթացքում Ազգային անվտանգության խորհրդի քարտուղար Արթուր Բաղդասարյանն այս առնչությամբ հայտնեց, որ իր կողմից ղեկավարվող Հայաստանի ու Եվրոպական կառույցների համագործակցությունը համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի որոշմամբ ստեղծված աշխատանքային խումբը գործում է արդյունավետ և «Հույս ունենք, որ առաջիկա 2-3 ամսում այդ աշխատանքները կավարտվեն, և կունենանք համալիր փաստաթուղթ, որը թույլ կտա լուծել միգրացիոն քաղաքականության խնդիրները: Հայաստանի համար այդ հարցերի լուծումը կարևոր է ինչպես ազգային անվտանգության տեսակետից, այնպես էլ միգրացիոն հոսքերի և ռիսկերի ճիշտ կառավարման առումով»:

Հայաստանում Եվրոպական հանձնաժողովի պատվիրակության ղեկավար դեսպան Ռաուլ դը Լյուցեմբերգերը նշեց, որ կարևոր խնդիր է Հայաստանի ու ԵՄ անդամ երկրների միջև վիզային ռեժիմի հեշտացումը: Սակայն դա Հայաստանից պահանջում է ԵՄ չափանիշներին համապատասխանող բարեփոխումներ ու օրենսդրական փոփոխություններ: Մասնավորապես, ԵՄ չափանիշներին համապատասխան քաղաքականության մշակումն ու իրականացումը հնարավորություն կտան գործուն քայլեր ձեռնարկել ԵՄ անդամ երկրներում ապրող Հայաստանի քաղաքացիների օրինական իրավունքների և շահերի պաշտպանության ուղղությամբ:

Ներկաները կարևորեցին նաև միգրացիայի կառավարման և ոլորտի կարգավորման համակարգի հետագա զարգացման աշխատանքների շարունակականությունը:

Հայաստանը և կոլեկտիվ անվտանգության համակարգերը. ընտրություն թե՞ համագործակցություն

Շուրջ 200 երիտասարդներ Գյումրիում և Վանաձորում 2010թ. փետրվար-մարտ ամիսներին մասնակցեցին ՀՀ-ՆԱՏՕ հարաբերությունների վերաբերյալ հանրային քննարկումներին: Դրանք իրականացվեցին ՄՁՄԿ-ի և Հայկական ատլանտյան ասոցիացիայի (ՀԱԱ) համագործակցությամբ: Ձևարկումները պարբերաբար անց են կացվում Հայաստանի տարբեր շրջաններում: Գյումրեցի և Վանաձորցի երիտասարդներն ակտիվորեն մասնակցելով հանրային քննարկումներին Հայաստան-ՆԱՏՕ գործակցության խնդիրների վերաբերյալ արտահայտեցին ավելի քան 300 մտքեր, կարծիքներ, առաջարկներ:

Նոր սերունդ՝ նոր մարտահրավերներ. գլոբալ անվտանգությունը և կլիմայի փոփոխությունը

ՄՁՄԿ-ն շարունակում է Հայաստանում խթանել ՆԱՏՕ-ի առաքելության և գործունեության վերաբերյալ հասարակության ավելի խորը ընկալումը: Հայկական ատլանտյան ասոցիացիայի (ՀԱԱ) հետ համատեղ ՄՁՄԿ-ն ջանում է բարձրացնել հատկապես երիտասարդների իրազեկությունը տարածաշրջանում և ընդհանրապես աշխարհում ՆԱՏՕ-ի դերի վերաբերյալ:

Ավելի քան հիսուն երիտասարդներ և փորձագետներ Հայաստանից, Վրաստանից, Ռուսաստանից, Թուրքիայից և Ուկրաինայից 2010թ. փետրվարի 4-6-ը մասնակցեցին «Հարավային Կովկասի երիտասարդական ֆորում»: ՆԱՏՕ-ի անվտանգության հայեցակարգը. հրն է մեր դերը» տարածաշրջանային սեմինարին, որը կազմակերպել էին ՀԱԱ-ն և ՄՁՄԿ-ն՝ Նորվեգիայի ատլանտյան հանձնաժողովի օժանդակությամբ:

Սեմինարի առաջին օրը նվիրված էր ՆԱՏՕ-ի նոր ռազմավարական հայեցակարգին և Հարավկովկասյան երկրներ-ՆԱՏՕ հարաբերություններին: Մասնակիցները քննարկեցին նաև շրջակա միջավայրին և անվտանգությանը վերաբերող առանձին խնդիրներ: Չեկոսլովակիայից ինքնուրույն եկած հայ և օտարերկրացի փորձագետներ: Մասնակիցները այցելեցին նաև Երևանում ՆԱՏՕ-ի տեղեկատվական գրասենյակ:

Երկրորդ օրը նվիրված էր շրջակա միջավայրի խնդիրներին: Երիտասարդները մասնակցեցին կլիմայի փոփոխությանը և միջավայրի աղտոտմանը վերաբերող Կոպենհագենի կոնֆերանսի հիման վրա դերային խաղին՝ որպես պետությունների կամ գերատեսչությունների ղեկավարներ: Արդյունքում, երիտասարդները ձեռք բերեցին ոչ միայն տեսական գիտելիքներ, այլև հնարավորություն ունեցան դրանք կիրառելու գործնականում: Սեմինարի ավարտին մասնակիցները ստորագրեցին «Ածխածնի արտանետման նվազեցման» և «Շրջակա միջավայրի գլոբալ հիմնադրամի» արձանագրությունները:

Ու՛ր են տանում հայ-թուրքական ժողովրդական դիվանագիտության առաջին քայլերը

2001-2004թթ. Թուրքիայում և Կովկասում ժողովրդական դիվանագիտության ոլորտում մի շարք ծրագրեր ղեկավարած Դեյվիդ Ֆիլիպսը հայ ընթերցողին ներկայացրեց իր «Բարձրաձայնելով անցյալը» գրքի հայերեն թարգմանությունը: Գրքում նա պատմում է հայ-թուրքական ժողովրդական դիվանագիտության նախաձեռնության ընթացքում ձեռք բերած փորձի և քաղած դասերի մասին:

Գրքի հայերեն թարգմանությունը և հրատարակությունը իրականացվել է Մարդկային զարգացման միջազգային կենտրոնի և Եվրասիա համագործակցության հիմնադրամի աջակցությամբ, ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության տրամադրած միջոցներով: Գրքի շնորհանդեսին, որը տեղի ունեցավ 2010թ. փետրվարի 4-ին Երևանում, ԱՆԻ Պլազա հյուրանոցում, ներկա էին ժողովրդական դիվանագիտության նախաձեռնությունների մասնակիցներ, պետական և հասարակական գործիչներ, միջազգային կառույցների ներկայացուցիչներ:




Պրոֆ. Դեյվիդ Ֆիլիպսը իր գրքի երևանյան շնորհանդեսին. փետրվար 2010:

Դեյվիդ Ֆիլիպսն իր երախտագիտությունը հայտնեց թարգմանության նախաձեռնողներին և նշեց. «Երբ առաջին անգամ առնչվեցի հայ-թուրքական հաշտեցման գործընթացին, ակա՛նատես եղա, թե որքան դժվարությամբ են կողմերը՝ հատկապես թուրքական կողմը, գնում երկխոսության: Սառույցը կոտրվեց ժողովրդական դիվանագիտություն նախաձեռնելու հայտարարումից հետո, երբ երկու երկրների քաղաքացիական հասարակության ներկայացուցիչները մի շարք ծրագրեր նախաձեռնեցին: Այսօր արդեն ես հատկապես ուրախ եմ այս սրահում տեսնել նոր սերնդի հայ և թուրք ներկայացուցիչների, ովքեր պիտի կյանքի կոչեն այս ծրագրերը: Կցանկանայի իմանալ, թե ձեզնից յուրաքանչյուրն ինչ է անելու պատմության ընթացքը փոխելու համար, և հուսով եմ, որ «Բարձրաձայնելով անցյալը» գրքում շարադրված պատմությունը ձեր համար ուղեցույց և տեղեկության աղբյուր կդառնա»:

ՄՁՄԿ գործադիր տնօրեն Թևան Պողոսյանը իր ողջույնի

խոսքում նշեց. «Դարասկզբին երկրագնդի վրա սոսկ մի քանի արժանավոր թուրք էր գլուխ խոնարհել Ցեղասպանության զոհերի հիշատակի առջև: Այժմ արդեն նախորդ դարի մեծագույն ոճրագործություններից մեկը ճանաչում են հարյուրավոր թուրքեր: Կստահ եմ՝ ազգային արժանապատվությունը վերագտած թուրքերի քանակը մեծանալու է հազարներով ու հարյուր հազարներով, իսկ ցեղասպանությունը ժխտողների թիվը՝ աննախադեպ նվազելու է: Դեպի այդ օրը տանող երկար ճանապարհի առաջին քայլն արված է: Այն արված է նաև Դեյվիդի շնորհիվ՝ իր նախաձեռնության, իր գիտելիքի ու համբերության, իր հավատի և իր գրքի շնորհիվ»:



ՄՁՄԿ-ը՝ մամուլում

Մի շարք հայկական և միջազգային լրատվամիջոցներ անդրադարձել են ՄՁՄԿ-ի հրապարակած տեղեկատվությանը, ըստ որի Զայաստանի «Մարդկային զարգացման միջազգային կենտրոն» կազմակերպությունը դասվել է աշխարհի հիսուն, Արևելյան Եվրոպայի քսանհինգ լավագույն վերլուծական կենտրոնների թվին: Գնահատվել են վերլուծական կենտրոնների կատարած աշխատանքները, ձեռքբերված հաջողությունները, ճանաչվածությունը: «Արմենայրեսի» հետ զրույցում ՄՁՄԿ գործադիր տնօրեն Թևան Պողոսյանը նշել է, որ նման գնահատականը մեծապես կիսթանդարտի կենտրոնի գործունեությունը: «Սա կարևոր է ոչ միայն մեր կազմակերպության, այլև մեր երկրի համար: Կենտրոնի գործունեության արդյունքում բարձրացավ մեր պետության հեղինակությունը: Լավագույն վերլուծական կենտրոն ճանաչվելը նաև պարտավորեցնող է»:

News.am և Youtharmenia.ru տեղեկատվական կայքերը հրապարակել են ՄՁՄԿ գործադիր տնօրեն Թևան Պողոսյանի հետ հարցազրույցը: Վերջինս նշել է. «Արտաքին քաղաքականության ոլորտում Զայաստանի նախաձեռնությունը 2009թ.-ին տեղի ունեցած հիմնական իրադարձությունն էր, քանի որ փոքր պետությանը հնարավորություն տվեց խոսել համաշխարհային ուժերի հետ հավասար հարթակում, ինչպես նաև ընդգծել իր դերը կազմակերպությունների կազմում, այլ խոսքով՝ «իր տեղը հաստատել աշխարհի քարտեզին»:

«Զայաստանի ներկա քաղաքականությունը Զայաստան-Թուրքիա հարաբերությունների համատեքստում հնարավորություն տվեց երկրին բարձրացնել իր միջազգային վարկանիշն այնպիսի միջազգային կազմակերպությունների շրջանակներում, ինչպիսին է ԶԱՊԿ-ն: ԶԱՊԿ-ի կազմում Զայաստանի նախաձեռնությունը արագ արձագանքման գիևճարական ստորաբաժանումների ձևավորման վերաբերյալ այս ինչ-որ տեղ ձևական կազմակերպությունը փոխակերպեց լուրջ կառույցի»:

Կանխատեսելով 2010թ. զարգացումները, Պողոսյանը ենթադրեց, որ դարաբաղյան հակամարտության կարգավորման գործում էական փոփոխություն չի լինի, մասնավորապես հաշվի առնելով ԵԱՀԿ Մինսկի խմբի ռուս և ֆրանսիացի համանախագահների փոփոխությունը և ոչ մի հարցում փոխհամաձայնության չգալու Ադրբեյջանի ընդունած դիրքորոշումը:

2010թ. նոր քաղաքական զարգացումներ չեն լինի, սակայն տնտեսական տեսանկյունից այն դեռևս դժվար կլինի: Պողոսյանը նաև ընդգծեց 2010թ. Եվրախնտեգրման ուղղությամբ առաջընթացի կարևորությունը:

ՄՁՄԿ-ի մասին՝ մանրամասն

2000թ. մարտին հիմնադրված Մարդկային զարգացման միջազգային կենտրոնը (ՄՁՄԿ) Զարավային Կովկասի առաջատար վերլուծական կենտրոն է, որը համախմբել է հանրային և մասնավոր հատվածներում խոր ակադեմիական գիտելիքներ և աշխատանքային հարուստ փորձ ունեցող բարձրակարգ վերլուծաբանների և հետազոտողների: Մեզ միավորում են ընդհանուր արժեքները, նվիրվածությունը մասնագիտական գերազանցության և էթիկայի բարձր սկզբունքներին: Մենք սերմանում/զարգացնում ենք քաղաքականության մշակման ու իրականացման մասնակցային գործընթացը, մշակում և ներդնում տարածաշրջանային, ազգային և տեղական քաղաքականության նորարարական արդյունավետ գործիքներ ու մեթոդներ:

Մեր շահառուներին, այդ թվում՝ պետական կառավարման մարմիններին, քաղաքացիական հասարակության և մասնավոր հատվածի կառույցներին և զարգացման գործընկերներին ՄՁՄԿ-ն տրամադրում է որակյալ խորհրդատվություն, քաղաքականության վերլուծության և զարգացման/մշակման ծառայություններ: Կենտրոնը ստեղծում է նաև քաղաքականության ներկայացման/հաղորդակցության նորարարական գործիքներ և ձևավորում երկխոսության համար նպաստավոր միջավայր: Կենտրոնը երկրում և տարածաշրջանում որոշումների կայացման գործընթացին քաղաքացիների մասնակցության նոր արդյունավետ տեխնոլոգիաների մշակման և ներդրման առաջամարտիկն է: Առաջին անգամ 2004թ. ներդրված մեթոդները շարունակականորեն կատարելագործվել և վերածվել են երրորդ սերնդի գործիքների: Իր տասնամյա գործունեության ընթացքում ՄՁՄԿ-ն դարձել է գիտելիքի և գերազանցության լավագույն կենտրոններից մեկը՝ ճանաչվելով որպես հուսալի և ցանկալի գործընկեր ինչպես մեր տարածաշրջանում, այնպես էլ ողջ աշխարհում:

ՄՁՄԿ-ը համացանցում և կոնտակտները

Էլ. փոստ՝ mail@ichd.org
Հեռ.՝ +374 (10) 582638, +374 (10) 528321;
Ֆաքս՝ +374 (10) 527082
Հասցե՝ Երևան 0001, Սայաթ Նովա 19
 «Անի Պլազա» բիզնես կենտրոն

Դիտեք մեզ այստեղ՝ www.vimeo.com/ichd

Հետևեք մեզ այստեղ՝ www.facebook.com/ichd.thinktank

Միացե՛ք մեզ այստեղ՝ <http://groups.to/ichd-thinktank>

Այցելե՛ք մեզ այստեղ՝ www.ICHD.org

© Մարդկային զարգացման միջազգային կենտրոն

ՄՁՄԿ լրատուի տպագիր տարբերակը կարող էք ձեռք բերել ՄՁՄԿ գրասենյակում

ԿՐՏԱՏԵՆԹԵ ԹՂԹԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ Մտածիր կանաչ